

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ողորմածությամբն Ամենակալն Աստուծո և բարեհաճ կարգադրությամբ ազգիս Վեհափառ և Սրբազնագույն Կաթողիկոս Վազգեն Ա-ի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին»-ը օժտվեց խմբագրական նոր աշխատակազմով:

Քանի որ վերջին տարիներին վերացել են նախորդ շրջանի գաղափարական սահմանափակումներն, ու հոգևոր-կրոնական հարցերի առջև որևէ արգելք չկա, այսուհետև անհրաժեշտ է «Էջմիածին» ամսագրին հաղորդել եկեղեցա-աստվածաբանական ուղղություն, իսկ պատմա-բանասիրական հոդվածներից զետեղել միայն այնպիսիք, որոնք կապվում են մեր եկեղեցական պատմության կամ մեկնողական-դավանաբանական գրականության հետ:

Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի բուն առաքելությունն է՝ սովորեցնել հայ հավատացյալին ի՛ր դավանությունը, ի՛ր Եկեղեցու արարողությունները ու կանոնները, տպագրվող հոդվածներով սերմանել ընտանեկան աստվածատուր արքությունները պահպանելու ոգին:

Ամսագիրը հարկավոր է, որ ունենա գիտական խորք, արտացոլի Մայր Աթոռի գործունեությունը, ինչպես նաև նպաստի ժամանակակից ազգային-հոգևոր մտքի զարգացմանը: Իր նախորդի՝ «Արարատ»-ի նման, «Էջմիածին»-ը նույնպես նախ և առաջ պետք է կազմվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների հեղինակած գործերով: Նպատակահարմար ենք գտնում նյութերի զետեղման մոտավոր այսպիսի կարգ.

Ա Բաժին—Պաշտոնականք

ա. Ամեն համար բացվելու է խմբագրականով, որի նպատակն է լինելու՝ ընդհանրացված գծերով ներկայացնել հոգևոր-եկեղեցական կյանքի այժմեական խնդիրները.

բ. Հայրապետական, պաշտոնական հրապարակումներ:

գ. Եկեղեցական բեմ. լուրեր: Նպատակն է՝ վեր հանել Մայր Աթոռի միաբանական գործունեությունը.

դ. Թեմական կյանք: Ներկայացնել ներքին և արտաքին թեմերի կրոնական համապարփակ գործունեությունը.

ե. Միջեկեղեցական կյանք և էկումենիկ շարժում.

Բ Բաժին—կրոնական, եկեղեցական և աստվածաբանական նյութեր

ա. Քրիստոնեական վարդապետության հիմունքները.

բ. Հայ Եկեղեցու դավանաբանական ժառանգությունը.

գ. Հայ Եկեղեցու պատմության և եկեղեցական մատենագրության լուսաբանում.

դ. Դեպի քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը.

ե. Անցյալի լուսավոր էջերից—նախորդ շրջանի մեր հոգևորականների գործերի առավել խտացված և ոգեղեն հատվածների ներկայացումը մերօրյա ընթերցողին.

զ. Հոգևոր-կրոնականը մեր դասական մատենագիրների գործերում վեր հանող նյութեր և հայոց պատմիչների եկեղեցական այն աշխատանքների լուսաբանումը, որոնք նվազ հայտնի են կամ գրեթե ներկայացված չեն.

է. Պատմա-բանասիրական այնպիսի հոդվածներ, որոնք կապվում են եկեղեցական պատմության հետ.

ը. Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանական և դավանաբանական հիմքերին նվիրված հոդվածներ.

թ. Պարբերաբար ներկայացնել այսօրվա ընթերցողին ոչ այնքան հայտնի այն տաղերը և ներբողները, որոնք ափռված են մեր ձեռագրերի էջերում և նվիրված են Էջմիածնին և որոնցում շեշտվում է Մայր Աթոռի՝ որպես Հայոց հոգևոր կենտրոնի գաղափարը.

ժ. Գրքերի տեսություն: Հայաստանում և Սփյուռքում լույս տեսած հոգևոր-մշակութային արժեքավոր գործերի գրախոսություններ:

«Էջմիածին» ամսագրի նոր աշխատակազմը իր ուժերի ներածին չափով լավագույնս կանի Հայ Եկեղեցու հավատքի տարածմանը և կնպաստի հայ ժողովրդի զավակներին կրոնական-բարոյական սրբազան դաստիարակությամբ Աստծու արժանի ժառանգորդներ դարձնելու գործում:

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօն է սուրբ ծննդեան, աւետիս:
Տեառն մերոյ եւ Յայտնութեան, աւետիս:

Այսօր արեւն արդարութեան. աւետիս:
Երեւեցաւ ի մէջ մարդկանն. աւետիս:

Այսօր Սուրբ Կոյսն անապական. աւետիս:
Ծնաւ երեր զանմահ արքայն. աւետիս:

Այսօր հրեշտակք յերկնից իջան. աւետիս:
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն. աւետիս:
Այսօր դժոխքն սարսեցան. աւետիս:
Գունդք դիւաց յոյժ տրտմեցան. աւետիս:
Այսօր չարքն կարկեցան. աւետիս:
Եւ ադամեանքն ուրախացան. աւետիս: